

ԹՐԲԱԿԱՆ ԲԱԶԱԼԵՐՈՂ ՎԱՅ ՀԱՅ Է

Posted on July 2, 2024 by Keghart



Category: [Opinions](#)



Լիւսի ՏԵՐԱԿԱՆ, Երեւան, 28 Յունիս 2024

Բազմաթիւ հայեր սկզբունք որդեգրած են չգնել թրքական արտադրութեան ապրանքներ ու այդպիսով մերժել օգուտ տալ թուրքին տնտեսութեան: Անոնք կը պաշտպանեն այն թէզը, թէ թրքական ապրանքները քաջալերելով կը խթանուի Թուրքիոյ տնտեսութիւնը, հետեւաբար, այդ գումարներով, բացի տնտեսապէս բարգաւաճելէ – որ ներկայ դարաշրջանին կարեւորագոյնը կը համարուի պետութիւններուն համար – անոնք զէնք ու զինամթերք կը գնեն կամ կ'արտադրեն եւ եթէ ոչ ուղղակիօրէն, ապա անուղղակիօրէն՝ Ատրապէյճանի իրենց եղբայրներուն ճամբով, կ'օգնեն հարուածելու եւ սպաննելու հայեր՝ զինուոր թէ սովորական քաղաքացի:

Այս մտածելակերպով դաստիարակուած եմ նաեւ ես: Թրքականը մերժող միակը չէի շրջապատիս մէջ, բայց մեծամասնութիւն չէիք: Ինծի համար մանկութենէն արգիլուած են թրքական ուտելիքները՝ տուրմ, քաղցրեղէն եւ այլն: Այդ ժամանակ հագուստեղէնի ընտրութիւնն ալ իմս չէր: Դպրոցին մէջ ունէի ընկերներ, որոնք գրաւիչ փաթեթաւորումով ու համեղ տուրմեր կը բերէին, բայց ինծի համար «արգիլուած պտուղ» էր թրքականը, որով ջուր լեցուցած պիտի ըլլայի մեր թշնամիին ջրաղացին:

Այս պատճառով է, որ ես երկար տարիներ մերժած եմ թրքական ուտելիքները, թրքական հագուստները, նոյնիսկ չեմ ուզած այդ արտադրութեանց վաճառատուները մտնել, որպէսզի «փորձութեան» չենթարկուիմ: Մերժած եմ, որ թռիչքային ճամբորդութեանս դադարն ըլլայ Թուրքիոյ մէջ, մերժած եմ թրքական հեռուստաշարերը դիտել՝ թէկուզ արաբերէնի թարգմանուած տարբերակներով:

Շատ լաւ գիտէի, որ գլխաւոր հայօճախ Պուրճ Համուտի՝ հայերով տնօրինուող վաճառատուներն իսկ լեցուն են թրքական հագուստներով, նպարավաճառները՝ թրքական քաղցրաւենիքով, հայկական տուները՝ թրքական հեռուստաալիքներու բազմապիսի յայտագրերով... Եւ այս բոլորը հակառակ կուսակցական կամ միութենական պատասխանատուներու յորդորներուն: Անոնք իբրեւ թէ դէմ են այս բոլորին, իւրաքանչիւր տարուան Ապրիլ 24-ին կը քաջալերեն հայապատկան խանութներուն երկաթեայ դարպասներուն, շէնքերու պատերուն եւ գետիները Թուրքիոյ հասցէին հայիոյանքներու արձանագրումը (երեւի կարծելով թէ մեր դատին ի նպաստ քայլեր են), բայց մեծ մասը իր հանգստեան ուղղութիւնը ընտրած է Պոստրումն ու Մարմարիսը...

2017 թուականն էր. Երեւանի վաճառատուներէն մէկէն գնեցի շապիկ մը: Սովորաբար կը նայէի ո՛ր երկրի արտադրութիւն ըլլալը: Միամտաբար, մտքես չանցաւ նոյն ստուգումը կատարել Երեւանի մէջ: Հասայ գանձապահին մօտ եւ հոն յիշեցի ստուգելու «բարի» սովորութիւնս: «Made in Turkey» պիտակը տեսնելով, գանձապահին ըսի, որ չեմ ուզեր վերցնել այդ կտորը: Վերջինս առանց տրտնջալու շապիկը հեռացուց սեղանէն:

Կ'ուզեի սկզբունքս բացատրել, ուստի զարմացած հարց տուի, թե չ'ուզե՞ր իմանալ պատճառը, եւ նշեցի շապիկին թրքական ըլլալը: Գանձապահուհին դարձեալ առանց որեւէ կերպ հակազդելու, մէկ կողմ դրաւ «մերժուած» շապիկը:

2019 թուականն Եր. ուխտագնացութիւն դեպի Արեւմտեան Հայաստան: Մուշի պանդոկներէն մէկուն մէջ մեր գիշերակացի ընթացքին սենեակին մէջ խնդիր մը ունեցայ եւ ընդունարանի միայն թրքերէն խօսող պաշտօնեային հետ հաղորդակցեցայ «Google translate»-ով, որովհետեւ չուզեցի իմանայ, որ ես թրքերէն կը հասկնամ:

Այս բոլորը ինքնագովութիւն ընելու կամ անձս ուրիշներու հետ համեմատելու համար չէ որ կ'ըսեմ: Բայց կար ժամանակ, երբ հաւատացած էի, որ «լաւ» հայը կը մերժէ թրքականը:

Անկիւնադարձային փոփոխութիւնը 2020 թուականին Եր: Հայրենադարձուելէ ետք, այս հարցերը սկսայ դիտել այլ ակնոցով: Հասկցայ որ.

* հայրենասիրութեան չափանիշը բաժակաճառերով ու հայրենաշունչ երգերով «Սթամպուլը արեան ծով դարձնելը» չէ:

* հայրենասիրութեան չափանիշը ամառները Հայրենիք այցելելով ու Թուրքիան անտեսելով չէ:

* լաւ հայ ըլլալու չափանիշը թրքականը մերժելով ու թուրքին հայիոյելով չէ:

Վստահ չեմ, հայրենադարձուի՞լն Եր ինձի համար ճակատագրականը այս առումով, թե՞ 2020-ի պատերազմին յաջորդող ժամանակաշրջանը: Գուցէ երկուքը միասին, որոնք ժամանակագրականօրէն համընկեցան: Եւ սկսայ այլ մտածողութեամբ մօտենալ Թուրքիան կուրօրէն մերժելու գաղափարին:

Երիցս քաւ լիցի, նպատակս Թուրքիան անմեղսունակ ներկայացնելը չէ, ոչ ալ զայն արդարացնելը հայ ազգի – եւ ոչ միայն մեր – նկատմամբ անոր գործած յանցանքներուն ու ցեղասպանական արարքներուն համար: Ոչ ալ կը միտիմ թրքական արտադրութեան ապրանքները գովազդել, հակառակ անոր որ նոյնիսկ Հայաստանի մէջ կը լսեմ «թրքական է, լաւ տեսակն է» արտայայտութիւնը: Բայց Թուրքիան որպէս պետութիւն կամ անոր դերը տարածաշրջանին մէջ թեթեւի առնելը, թուրքը «բռնենք ոտքէն կախենք» կամ զայն նմանատիպ խօսքերով ներկայացնելը անհրատեսական դարձան ինձի համար: Ու ես հասկցայ, թերեւս ուշացումով, որ Թուրքիոյ հետ որպէս դրացի պետութիւն յարաբերութիւն մշակելը ստիպողական է, անոր հետ սահմաններու բացումը նախեւառաջ մեզի՛ համար անհրաժեշտ է: Եւ ի զուր եւս այդ խուճապ ստեղծող գաղափարները, թե այդպիսով թրքական արտադրանքը կ'ողողէ հայաստանեան շուկան (որովհետեւ թրքական ապրանքը արդէն ամենուր կայ):

Վերոնշեալ միտքը ԵՐԲԵՔ չի նշանակել ներել թուրքին կամ անոր նախահայր օսմանցիին՝ անոր հրեշային ու անմարդկային արարքին համար կամ չպահանջել մեր

արդար իրավունքը: Հայոց ցեղասպանության փաստը իւրաքանչիւր հայու ինքնութեան ու հոգեբանութեան հետ շաղախուած է, հետեւաբար ո՛չ որպէս ազգ եւ ո՛չ որպէս պետութիւն՝ ո՛չ մոռցող ենք, ո՛չ ալ դրժող:

Ահաւասիկ Յունաստանը, որ մեզի չափ թշնամի կը նկատէ Թուրքիան, իր վարչապետին Թուրքիա կատարած վերջերս այցելութեամբ կը փորձէր անելի ամրապնդել Յունաստանի ու Թուրքիոյ միջեւ յարաբերութիւնները՝ ի շահ իր երկրին, թէեւ երկու երկիրներն ալ տարակարծիք կը մնան Եգեականի կղզիներուն ու այլ հարցերու շուրջ: Յոյներն ալ դարերով ենթարկուած են նոյն թուրքին ցեղասպանութեան, բայց Ուքրանիոյ պատերազմին սկիզբը երկրին ղեկավարը հանդիպեցաւ Թուրքիոյ նախագահին հետ՝ այդ համաշխարհային թնճուկը քննարկելու համար:

Թրքական արտադրանքը մերժե՞լ... անհատի մը ազատ ընտրութիւնն է: Թուրքիա չճամբորդե՞լ... դարձեալ ազատ ընտրութեան հարց է: Թուրքին հայիոյելով հաճոյանա՞լ... անձնական «հաճոյք» է: Բայց որքանո՞վ նպատակայարմար է մեր անժամանցելի դատը առնչել այս մանրամասնութիւններուն հետ, որոնք 109 տարի է ոչ մէկ կերպ սատարեցին Հայոց ցեղասպանութեան ճանաչման Թուրքիոյ կողմէ ու հատուցման պահանջի աշխատանքներուն:

Ինչ կը վերաբերի Հայաստանի Հանրապետութեան անսակարկելի շահերուն, որքանո՞վ ճիշդ է յաւերժ թշնամի մնալ երկրի մը հետ, որ անմիջական հարեւան է, որու ժողովրդագրական, տնտեսական եւ զինուորական հզօրութիւնը բազմապատիկ կը գերազանցէ մերինին: Երկիր մը, որմէ արեան պահանջ եւ հողային անհամաձայնութիւն ունինք, անոր հետ բանակցելու կամքն ու պատրաստակամութիւնը չունենա՞նք: Ինչո՞ւ Հայաստանի Հանրապետութիւնը կղզիացած կամ լճացած ապրի, եւ ինչո՞ւ մենք ալ որպէս հայեր կաղապարուինք հակազդեցութիւններու մէջ եւ տուրք տանք մեզ ազգովին յառաջ չտանող պահուածքներու: Երկրորդ համաշխարհային պատերազմը անվերապահ անձնատուութեամբ ակարտած գերմանացիք ինչպէ՞ս վարուեցան. կազմակերպուած ու նուիրեալ աշխատանքով ընդամենը տասնամեակի մը ընթացքին վերականգնեցին իրենց տնտեսութիւնը, այնուհետ թելադրող տեղ ունեցան համաշխարհային տնտեսութեան մէջ, յարաբերութիւններ (յաճախ՝ նոյնիսկ ջերմ) հաստատեցին յաղթանակած դաշնակից պետութեանց հետ, իսկ ընդամենը 45 տարի ետք իրականացուցին Գերմանիոյ վերամիաւորումը: Ինչո՞ւ մենք եւս նոյն եղանակով չընթանանք:

Համոզուած եմ, որ հայրենասէր, հայրենատէր ու «լաւ» հայը ան է, որ կ'առաջնորդուի իր ազգին ու հայրենական պետութեան շահերով: Փոխանակ մեր ներուժը բացասականօրէն ի գործ դնելու, կառչինք դրականին, իւրաքանչիւրս իր հնարաւորութիւններով՝ գաղափարներով ու աշխատանքով, մեր միաբանութեամբ

օգնենք Հայաստան անուան բարձրացման: Ուժեղացնենք Հայաստանի Հանրապետության պետականությանը, տնտեսությանը, բարելավենք մեր արտադրանքներուն որակը, հզորացնենք մեր անվտանգության գլխավոր երաշխավորը՝ մեր բանակը, ընդլայնենք ու ամրապնդենք մեր միջազգային կապերը, զարկ տանք մեր ազգային ու մշակութային արժեքներուն: Թող որ յառաջադիմությունը դարձնենք մեզի դրօշ եւ թող աշխարհը Հայաստանն ընկալէ որպէս անկախ, ինքնիշխան եւ զարգացումի ու հզորացումի ձգտող պետութիւն:

Comments



Setrag – 2024-07-06 09:30:29

What's the message? Is this a page from Pashinyan's book?



Mesrob – 2024-07-04 19:16:21

It's easy to recognize Turkish packaged foods. While "Turkiye" is often in small type and hidden, Ankara has legislated that all Turkish products should carry a red oval with the product's name in white at its centre. . It is supposed to recall Turkey's bloody flag. Those red ovals help Armenians not to buy the product.



Khoren KESISYAN – 2024-07-04 18:07:27

Ձեզ համար հայրենասիրությունը բաժակներով թուրքերու կենաց խմելն է եւ հեշտացնելը անոնց համար միայն կարելորդ` հայ ժողովուրդի բնաջնջումը: Այսպիսի գրութիւններու միակ դրդապատճառը ցեղասպանի մտաւորապէս յանձնուկիւր նորմալ երեւոյթ դարձնելն է եւ ստույգ դաւաճանութիւն` մանաւանդ Արցախի բնջումջումէն յետոյ, որ առաջին փուլն էր ամբողջական Հայաստանի բնաջնջման:



David – 2024-07-04 17:15:07

Գուցէ հայրենադարձութիւն է պետք որ մարդ Լիւսիի պէս իրապաշտ մարդ դառնայ և նախապաշարուած չմնայ..... թոյնով լեցուն:



Minas Kojayan – 2024-07-04 15:13:12

Թրքական ապրանք գնողը կամ քաջալերողը ԼԱԻ ՀԱՅ ՉԷ: Գիտենք որ թրքական հզօր տնտեսութենէն մազ պիտի չպակսի, բայց ցեղասպանուած ժողովուրդի մը թոռը ըլլալով...արեան հոտ կ'առնեմ անոնց սրբիչներէն ու ներքնաշորերէն: Գիտակցութիւնս եւ խիղճս չեն թելադրեր «արիւնոտ թթիւմորով» հաց ուտել...